Դրա հետեւանքն էր եւ այն, որ այդ ազգերը (գալլեր, բրիտաններ եւայլն) ոչ միայն չստեղծեցին իրենց ազգային գիրը ու իւրացրին քրիստոնէահաւատ հռոմայեցիների այբուբենը, այլ եւ ազգայնապէս ուծանալու, ձուլուելու վտանգին ենթարկուեցին։ Նրանց ցեղերի ժողովրդական բանահիւսութիւնը եւս վերանգուեց մեծապէս։

«Մինչեւ օրս էլ, բացառութեամբ սպաներէնի եւ իտալերէնի, Արեւմտեան Եւրոպայի բոլոր լեզուների վրայ ծանրանում է հռոմէական (լատին) գրի անէծքը, ինչպէս նաեւ սեփական, իրենց մասնայատուկ կարիքները բաւարարող գիր եւ ուղղագրութիւն չունենալու անէծքը», ասում է Մարքվարտ։

Ահա այդ՝ իսկապէս որ մեծագոյն անէծքից զերծ է մնացել հայ ժողովուրդը, որովհետեւ դարերի ընթացքում կարողացել է պահպանել իր ազգային դիմագիծը, դոհ չէ դնացել Հռոմի ամենակուլ ազդեցութեան։ Ինչ տարակոյս, որ սեփական գիր ու գրականութիւնն էլ իր կողմից է դարձել մեծագոյն ազդակը՝ ազգային ինքնուրոյնութեան պահպանման խնդրում։

Ըստ Մարքվարտի՝ հայ ժողովուրդը, ինչպէս նաեւ նրա արեւմտեան դրացիները՝ կապադովկացիները, «ամենանուրբ լսողութիւն» են ունեցել՝ լեզուական հնչիւնները իրարից տարբերելու համար։ Եւ եթէ յոյն եկեղեցու ազդեցութեան սահմանում գտնուած ժողովուրդների շարքում կապադովկացիները միակ բացառութիւնն են կազմել, որ զուրկ են մնացել «սեփական գրագրութիւն ունենալու բախտից», որովհետեւ նրանցում «դեռ հռոմէական տիրապետութիւնից առաջ սկսուած է եղել հելլենացումը», որով եւ իրենց եկեղեցական հայրերը 4-րդ դարում Աթէնքում ուսած լինելով՝ արհամարհանքով են լեցուած եղել իրենց բնաշխարհի «գիւղական բարբարոս լեզուին» հանդէպ, հայ ժողովրդի հանճարը, ընդհակառակը, կարողացաւ ժամանակին ստեղծել նրա «նուրբ լսողութիւնը» եւ իր «բարբարոս լեզուն» կատարելապէս բաւարարող հարազատ այբուբեն։

Բայց տեսէ՛ք, որ մեզնում դեռ այսօր էլ չեն պակսում յորդորներ՝ կամովին մեզ վրայ առնելու լատին գրերի լուծը եւ անէծքը. մի անէծք, որ մինչեւ օրս էլ ծանրացած է Արեւմտեան Եւրոպայի գրեթէ բոլոր լեզուների վրայ»։

«Ցեղ-քրիստոնէական շրջանում «բարբարոս լեզուների» համար ստեղծուած այբուբենների շարքում», ասում է Մարքվարտ, «հայերէն գրերի գիւտը անպայման ամենից աւելի նշանակալիցն է»։ Եւ դա ստեղծագործութիւնն էր հայ պատմութեան մեծագոյն հանճարների՝ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի, որոնց գործի մեծութեան առաջ նսեմանում են նման շատ ուրիշներ։

«Մի ժողովուրդ,— ասում է Մարքվարտ,— որ ծնել է այդպիսի դէմքեր, եւ որը գիտէ մեծարել նրանց՝ որպէս իր հերոսների, չի կարող երբեք կործանուել՝ հակառակ ամէն կարգի թուրք, քուրդ, թաթար, պարսիկ ժողովուրդների, ինչպէս նաեւ հակառակ բոլո՛ր մեծ պետութիւնների — միասին առած» (էջ 7–8)։

Անկարելի է լաւագոյն կերպով բնորոշել հայ գրերի եւ նրանց գտիչի դերը մեր բովանդակ անցեալի, ինչպէս եւ ներկայի ու ապագայի տեսակէտից։

«Հայերէն այբուբենի գիւտը երանելի Մաշթոցի ձեռքով,— շարունակում է անուանի հայագէտը,— այսպիսով ոչ միայն եկեղեցական պատմութեան տեսակէտից նշանակալից է..., այլ եւ մշակութային-պատմական տեսակէտից անսովոր նշանակութիւն ունեցող մի գործ. մի գործ, որով մինչ այն սեփական գրագրութիւնից զուրկ հայ ժողովուրդի քրիստոնէական ազգային զգացումը կարողացաւ պահպանել իր ուրոյն դիմագիծը եւ չլուծուիլ օտար ազդեցութիւնների մէջ, ստեղծելով բաղդատաբար մի հարուստ գրագրութիւն՝ մասնաւորապէս պատմական եւ աստուածաբանական բովանդակութեամբ։ Եւ այդ՝ Հայաստանի քաղաքական ինքնուրոյնութեան կորուստից քիչ առաջ միայն»։

Հայոց գրերի գիւտը այդպիսով հանդիսանում է «համաշխարհային-պատմական տարողութիւն» ներկայացնող մի երեւոյթ։ Եւ այդ տեսակէտից «հեռաւոր կերպով իսկ բաղդատութեան դրուել կարող չէ գոթական եպիսկոպոսի գիւտը՝ հայ վարդապետի գիւտի հետ»։

Հարկաւ, գրերի գիւտին զուգընթացաբար